



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 152-Ա

ք. Երևան

«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2025 թվականի նոյեմբերի 20-ին սեփական նախաձեռնությամբ հարուցված թիվ 61 վարչական վարույթի նյութերը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ *Օրենք*) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս նոյեմբերի 10-ից 12-ն իրականացրել է «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ ընկերության (այսուհետ՝ նաև *Ընկերություն*) կողմից հեռարձակվող «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» լսողական ծրագրի (այսուհետ՝ *Ծրագիր*) 2025 թվականի նոյեմբերի 6-ից 10-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրությունների մշտադիտարկում, որի արդյունքում արձանագրել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ *Օրենք*) 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթի առերևույթ խախտման հատկանիշներ, որի վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 20-ին կազմվել է արձանագրություն (այսուհետ՝ *Արձանագրություն*):

Արձանագրությունը կազմելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանք է հանդիսացել այն, որ 2025 թվականի նոյեմբերի 6-ին ժամը 18:27:43-18:29:00 ընկած ժամանակահատվածում ներկայացվել է հետևյալ տեղեկատվությունը.

Հաղորդավար՝ «Հարգելի ռադիոլսողներ՝, Վարչապետի հայտարարությունը ևս մեկ անգամ ներկայացնենք ձեր ուշադրությանը «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ»-ի եթերում, այս մասին լուրերի թողարկումներին անդրադարձել ենք: Լուրը կարևոր է, ևս մեկ անգամ հիշեցնենք, որ հետևյալ արտահայտությունն է հնչել՝ հունվարի 1-ից թղթի փող չշարժվի երկրում, եթե անգամ էլեկտրաէներգիայի խափանում է տեղի ունեցել, ոչինչ թող այդ գույքը մեկ շաբաթ հետո վաճառվի, համաշխարհային ինտերնետն անջատվեց, ոչինչ թող այդ գույքը չօտարվի, միայն ու միայն, բացառապես էլեկտրոնային տարբերակով: Ոչինչ թող գույքը չօտարվի, եթե մինչև հիմա դիմացել ենք, էլի կդիմանանք, թող չվաճառվի գույքը, ստեղծվի ճգնաժամ, ես դրա պատասխանատվությունը վերցնում եմ ինձ վրա, լուծումը կգտնեն, միայն թե լինի էլեկտրոնային վաճառք, հայտարարել է նա, ու այս առիթով կարծես թե համապատասխան երգ է հնչում «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ»-ով՝ «End of the world» աշխարհի վերջի մասին երգում է Մայլի Սայրուսը: Ընդ որում՝ հարգելի ընկերներ, անդրադառնալով նաև թոշակների հարցին՝ նա նշել է, որ մինչև հիմա իր համար անհասկանալի է, թե ինչո՞ւ 75 տարեկանից բարձր անձանց դեպքում թոշակը տրվում է կանխիկ: Թոշակների դեպքում հունվարի մեկից թղթի փող

չշարժվի հանրապետությունում, բոլորը՝ առանց բացառության, թոշակը ստանում են էլեկտրոնային եղանակով՝ հայտարարել է Վարչապետը»:

Համաձայն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես ապացույց:

Հարուցված թիվ 61 վարչական վարույթի շրջանակներում էական փաստերը.

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը 2025թ-ի նոյեմբերի 11-ի թիվ Ե/02/03.1/890-25 գրությամբ դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ ներկայացնելով «ՔԻՍՍ ԷՖԷՄ» լսողական ծրագրում հնչեցված տեղեկատվության սղագրությունը, նշելով՝ «(...) Համադրելով վերոնշյալը ՀՀ վարչապետի կողմից վերջին շրջանում հնչեցված արտահայտությունների հետ, նույնական բովանդակության տեղեկատվություն մեր կողմից չի արձանագրվել: Նմանատիպ արտահայտություններ վերաբերել են միայն պետական գույքի օտարմանը և թոշակներին, այլ ոչ գույքի վաճառքին և հունվարի 1-ից թղթի փողի շրջանառությանն ընդհանրական:»: Վերոնշյալի հիման վրա Հանձնաժողովը խնդրել է տրամադրել տեղեկատվություն, թե արդյոք վերոնշյալ արտահայտությունները հնչել են ՀՀ վարչապետի կողմից, արդյոք դրանք չեն ներկայացվում կոնտեքստից դուրս, ինչը ստեղծում է տպավորություն, որ հունվարի 1-ից երկրում ընդհանրապես կանխիկ գումարի շրջանառությունն արգելվում է:

Նշված գրությանն ի պատասխան՝ 2025 թվականի նոյեմբերի 18-ին ՄԳ/994-25 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմից ներկայացվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված արտահայտությունների սղագրությունը, որոնք հնչել են «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի քննարկման ընթացքում, ինչպես նաև տրամադրվել է 2025 թվականի նոյեմբերի 6-ի Կառավարության նիստի համապատասխան հղումը: Մասնավորապես՝ ներկայացված սղագրության մեջ նշված է՝

«(...) Հունվարի 1-ից թղթի փող չշարժվի թոշակների դեպքում: Բոլորը, առանց բացառության, ստանում են միայն էլեկտրոնային եղանակով: Ասում են մարդը չի կարողանում գնալ խանութ, ասում են, ավելի լավ իրա համար, որովհետև փողն է տալիս ինչ-որ մեկին, քարտը թող տա, ասի՝ անկանխիկ արեք առևտուրը, մի հատ էլ հետվճար կստանա, մի հատ էլ հետո, եթե հարց ծագի, թե այս մարդուն խաբել են, թե չէ, այս մեր 85 տարեկան թոշակառու պապիկին կամ տատիկին խաբել են, թե չէ: Այդ ամբողջը հետագծելի կլինի, կտեսնենք ով, ինչքան, երբ, որտեղ խաբեց: Այսպիսի հարցեր կան, որ տարիներով հնարավոր չի լինում լուծել, որովհետև... Ասում ենք միայն էլեկտրոնային: Պետական գույք վաճառելու ուրիշ մեթոդ գոյություն չունի....»:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով 2025 թվականի նոյեմբերի 20-ին կազմված Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի նոյեմբերի 20-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 61 վարչական վարույթ:

2025 թվականի նոյեմբերի 21-ին թիվ Ե/04/04.1/938-25 ծանուցմամբ (այսուհետ՝ Ծանուցում) «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊ ընկերությունը ծանուցվել է բոլոր վերը շարադրված հանգամանքների և փաստերի, ինչպես նաև վարչական վարույթի հարուցման փաստի և դրա իրավական հիմքերի վերաբերյալ՝ միաժամանակ տեղեկացվելով, որ տվյալ հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Ընկերությունը Ծանուցումը հաստատել է՝ secretariate@tvradio.am Հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին հետադարձ նամակ ուղարկելով:

Ծանուցմանն ի պատասխան 2025 թ-ի նոյեմբերի 25-ին ստացված թիվ ՄԳ/1010-25 գրությամբ (այսուհետ նաև՝ Պատասխան) (գրության ամսաթիվը նշված է 12.02.2025թ., որը ըստ էության Հանձնաժողովը դիտարկել է որպես վրիպակ և էական նշանակություն չունեցող և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բովանդակության մեջ անդրադարձ է կատարվել Ծանուցման մեջ նշված փաստական հանգամանքներին և թիվ 61 վարչական վարույթի բովանդակությանը) Ընկերությունը պատասխանել է, որ կարծում է, որ վարչական վարույթի հարուցման հիմք հանդիսացած հաղորդավարի կողմից ներկայացված արտահայտությունները (այսուհետ նաև՝ Արտահայտություններ) չեն պարունակում «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտման հատկանիշներ: Առանձնացնենք Պատասխանում արտացոլված էական նշանակություն ունեցող հիմնավորումները, որոնք արտացոլում են Պատասխանի բովանդակությունն ամբողջությամբ.

- Արտահայտություններն ինքնին օրենքով արգելված արարք չեն հանդիսանում և դրանցով չի խախտվում որևէ մեկի պատիվը և արժանապատվությունը,
- Այն չի գերազանցում քննադատության ընդունելի սահմանը և չի հանդիսանում սխալ տեղեկություն,
- Հաղորդավարը իր խոսքի սկզբում նշում է, որ ՀՀ վարչապետի հայտարարության մասին նշել է լուրերի թողարկման ընթացքում, ուստի այն պետք է ամբողջության մեջ գնահատել լուրերի համատեքստում.
- Հաղորդավարի արտահայտած մտքերը պետք է գնահատել ամբողջության մեջ, որտեղից պարզ է դառնում, որ Արտահայտությունները վերաբերում են թղթային փողով գույքի օտարման դադարեցմանը, այլ ոչ թե առհասարակ թղթային փողի շարժի արգելքին:
- Հնչեցրած երգը որևէ նշանակություն չունի Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառման տեսանկյունից;
- Հաղորդավարի կողմից թոշակի անկանխիկ վճարման ՀՀ վարչապետի պահանջի մասին խոսքը ևս պետք է ավելի վաղ հնչեցրած Արտահայտությունների հետ համադրել և գնահատել հաղորդավարի խոսքն ամբողջությամբ:

Պատասխանի եզրափակիչ մասում Ընկերությունը նշել է, որ վերջինիս անհասկանալի է, թե հաղորդավարի կողմից հնչեցրած որ արտահայտությունն է հիմք հանդիսացել վարչական վարույթի հարուցելու համար՝ «գույքի վաճառքը», «կենսաթոշակը», թե «երգի» վերաբերյալ ակնարկը, և հավելել է. «խնդրում եմ «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ-ի նկատմամբ վարչական վարույթը դադարեցված համարել՝ իրավախախտման կազմի բացակայության հիմքով»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պարճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների և պարզաբանումների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին»,

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիաձառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակագործ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Կարգավորող պետական մարմին՝ անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Հեռարձակողները պետք է ապահովեն... ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում՝ սեղմ ժամկետում միևնույն հաղորդման, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ այդ մասին իրազեկումը»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են:

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական դրույթները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը լսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել Օրենքի սահմանող դրույթները:

Հեռարձակողը 2017 թվականի հոկտեմբերի 06-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփուման տարածք՝ ք. Երևան, 100.7 ՄՀց հաճախականություն, լիցենզիայի համարը՝ N 236, գործողության ժամկետը՝ 06.10.2017թ.- 06.10.2027թ.):

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք.

Համադրելով բոլոր վերը շարադրված փաստերը և վերլուծելով դրանք Օրենքի համապատասխան դրույթների համատեքստում՝ Հանձնաժողովը հանգում է այն եզրահանգմանը, որ Ընկերությունը խախտել է իր՝ որպես Հեռարձակողի, հավաստի տեղեկատվության ապահովման պարտավորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Նախ և առաջ, անդրադառնալով Օրենքի վարչական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած նորմի վերլուծությանը, պետք է հասկանալ հանրության մեջ դրա կարևորությունը և նպատակները: Այն ենթադրում է, որ Հեռարձակողի պարտականությունն է

- Տեսալսողական հաղորդումների ընթացքում առաջնահերթորեն ապահովել ներկայացվող տեղեկատվության ճշգրտությունը և հավաստիությունը,
- Կարևոր և հանրության համար էական նշանակություն ունեցող տեղեկություններում սխալներ հայտնաբերելու դեպքում արագ գործել դրանց վերացման ուղղությամբ,
- պաշտպանել լսարանի (դիտողների) իրավունքները՝ գերծ պահելով սխալ տեղեկատվությունից,
- Բացառել ապատեղեկատվության տարածումը,
- Հաշվի առնելով զանգվածային գիտակցության և վարքագծի վրա տեսալսողական մեդիայի ունեցած էական ազդեցությունը՝ կանխել ապատեղեկատվության տարածումը, իսկ դրա պատահական տարածման դեպքում արագ վերացնել դրանք,
- Թույլ չտալ, որպեսզի տարածված ապատեղեկատվության արդյունքում հանրության մեջ առաջանա խուճապ կամ թյուրընկալումներ:

Վերոգրյալից հետևում է, որ հեռարձակվող տեղեկատվությունը պարտադիր պետք է լինի ճշգրիտ, ամբողջական և ներկայացված իր իրական համատեքստում: Սակայն Ընկերության կողմից սույն վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած և վարույթի շրջանակներում հնչեցված տեքստը ներկայացվել է համատեքստից կտրված՝ առանց անհրաժեշտ ամբողջականության ապահովման: Արդյունքում, հաղորդման բովանդակության մեջ կիրառված ձևակերպումները օբյեկտիվորեն հանգեցրել են իրավական իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների տարածմանը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում 2026 թվականի հունվարի 1-ից թղթադրամի շրջանառության դադարեցման կամ գույքի օտարման բացառապես էլեկտրոնային եղանակով իրականացվելու վերաբերյալ, մինչդեռ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ նման կարգավորումներ նախատեսված չեն և որևէ իրավական հիմք չունեն:

Ավելին, հաղորդավարը իր խոսքի սկզբում ասում է հետևյալ արտահայտությունը. «(...)Վարչապետի արտահայտությունը ևս մեկ անգամ հիշեցնենք... հետևյալ արտահայտությունն է հնչել՝ հունվարի մեկից թղթի փող չշարժվի երկրում, եթե անգամ էլեկտրաէներգիայի խափանում է տեղի ունեցել, ոչինչ թող այս գույքը մեկ շաբաթ հետո վաճառվի...», որից հետո «ու այս առիթով կարծես թե համապատասխան երգ է հնչում «Քիսս Էֆ Էմ»-ի եթերով՝ «End of the world» աշխարհի վերջի մասին երգում է Մայլի Սայրուսը»:

Հաղորդավարի խոսքի մեկնաբանման առնչությամբ Ընկերությունն, իր ներկայացրած Պատասխանում նշելով, որ հաղորդավարի արտահայտությունները պետք է գնահատվեն ամբողջական համատեքստում, վերջինիս խոսքը մեկնաբանում է հետևյալ կերպ.

«...Հաղորդավարի մտքերը ամբողջության մեջ գնահատելու արդյունքում պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է թղթային փողով գույքի օտարումը դադարեցնելուն, այլ ոչ թե առհասարակ թղթային փողի շարժի...»: Սակայն նշված մեկնաբանությունը չի համընկնում ՀՀ վարչապետի կողմից արված հայտարարության բովանդակության հետ, ինչը հիմնավորվում է ստորև ներկայացվող հիմնավորմամբ և փաստարկներով:

«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «...պետական գույք է համարվում Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը...»:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն. «...պետական գույքի օտարում՝ սույն օրենքին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ պետական գույքի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքի փոխանցումը իրավաբանական անձանց, համայնքներին, քաղաքացիներին, ինչպես նաև օտարերկրյա անձանց...»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինություն: 2. Շարժական գույք է համարվում անշարժ չհամարվող գույքը:»

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն՝ «...Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:... Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:»

Վերոշարադրյալ չորս հոդվածների վերլուծությունից երևում է, որ «պետական գույք» և «գույք» հասկացությունների, դրանց տնօրինման, օգտագործման, տիրապետման, օտարման հիմքերի և սեփականատերերի մեջ կա էական տարբերություն, մասնավորապես՝ պետական գույքի սեփականատեր կարող է լինել բացառապես պետությունը, իսկ գույքի սեփականատերը՝ ցանկացած անձ:

Ուսումնասիրելով 2025 թվականի նոյեմբերի 6-ի Կառավարության նիստի ձայնագրությունն ամբողջությամբ՝ պարզ է դառնում, որ խոսքը գնում է աճուրդով պետական գույքը վաճառվելու մասին: Մասնավորապես՝ այդ մասին կարող ենք լսել նիստի ձայնագրության 39:25, 39:51, 43:15-րդ ժամանակահատվածներում և բազում այլ հատվածներում, ինչպես նաև նշենք այն պարզ հանգամանքը որ տվյալ քննարկումն իրականացվում է պետական գույքի գնահատման կոնտեքստում:

Այստեղից կարող ենք գալ այն եզրահանգմանը, որ և հաղորդավարը, և Ընկերության տնօրենը (ում կողմից ստորագրվել է Պատասխանը) ամբողջ ծավալով չեն ծանոթացել այն նյութին, որի մասին իրազեկում են հանրությանը՝ տարածելով ապատեղեկատվություն և հնչեցնելով կոնտեքստից կտրված արտահայտություններ:

Անդրադառնալով Ընկերության այն պնդմանը, որ հաղորդավարի խոսքը չի խախտում որևէ մեկի պատիվը և արժանապատվությունը՝ նշենք, որ Հանձնաժողովը իրավասու չէ

գնահատական տալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով նախատեսված արարքների հատկանիշների վերաբերյալ կամ հայտնաբերել դրանք այն պարզ պատճառով, որ դրանք հանդիսանում են քաղաքացիաիրավական հարաբերություններ, և անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ: Ինչ վերաբերում է այն ակնարկին, որ հաղորդավարի խոսքը չի գերազանցում քննադատության ընդունելի սահմանը, ապա հիմնվելով վերը շարադրված վերլուծության վրա՝ Հանձնաժողովը գտնում է, որ նույնիսկ եթե հաղորդավարի խոսքի ընթացքում հնչել է քննադատություն, ապա այն վերաբերում է նույն հաղորդավարի կողմից նույն հաղորդման ընթացքում հնչեցրած Արտահայտություններին, որոնց հավաստիությունը հանդիսանում է սույն վարչական վարույթի հիմք, այսինքն՝ սխալ տեղեկություն է, ուստի քննադատության սահմանի ընդունելի կամ ոչ ընդունելի լինելու հանգամանքը չի կարող լինել սույն վարչական վարույթի առարկա:

Հարկ է անդրադարձ կատարել նաև Պատասխանում ներկայացված այն պնդմանը, որ հաղորդավարն իր խոսքում շեշտադրում է այն, որ վարչական վարույթի հիմք հանդիսացած՝ հաղորդավարի կողմից հնչեցրած տեղեկության մասին ավելի վաղ խոսվել է լուրերի թողարկման ընթացքում, ինչի արդյունքում, Ընկերության կարծիքով, այդ հանգամանքը հաշվի առնելով, այն պետք է գնահատել երկու հաղորդումների համատեքստում:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ նույն տրամաբանության շրջանակում Ընկերությունը ներկայացրել է նաև մեկ այլ հիմնավորում՝ պնդելով, որ հաղորդավարի կողմից հնչեցված արտահայտությունները ենթակա են մեկնաբանման՝ դրանք համադրելով ՀՀ վարչապետի՝ կենսաթոշակի հարցի վերաբերյալ արտահայտած մտքերի հետ:

Այստեղ կարևոր է, որ խոսքը գնում է երկու տարբեր հաղորդումների մասին, որոնք հնչել են տարբեր ժամանակահատվածում և բովանդակային տեսանկյունից չեն կարող գնահատվել որպես ամբողջական նյութ: Միևնույն ժամանակ հատկանշական է, որ հաղորդավարն իր խոսքի սկզբում հնչեցնում է հետևյալ արտահայտությունը.

«(...) Վարչապետի հայտարարությունը ևս մեկ անգամ ներկայացնենք ձեր ուշադրությանը...Լուրը կարևոր է, ևս մեկ անգամ հիշեցնենք, որ հետևյալ արտահայտությունն է հնչել ...»: Տվյալ արտահայտություններն ուղղակիորեն նշանակում են այն, որ հաղորդավարի կողմից հնչեցրած տեքստը նույնաբովանդակ կերպով հնչել է այլ հաղորդման ժամանակ, և տվյալ հայտարարությունը դրա կրկնությունն է և այլ կերպ չի կարող ընկալվել: Միևնույն ժամանակ անձը (տվյալ պարագայում ունկնդիրը) պարտավորություն չունի տվյալ հաղորդման շրջանակներում ստացված տեղեկությունը ստուգելու, վերլուծելու և համեմատելու մեկ այլ հաղորդմամբ հնչածի հետ: Ինչ վերաբերում է ՀՀ վարչապետի՝ կենսաթոշակի հարցի վերաբերյալ արտահայտած մտքերին, ապա պետք է նշել, որ դրանք համադրելով հաղորդավարի կողմից հնչեցրած մնացած Արտահայտությունների, ինչպես նաև 2025 թվականի նոյեմբերի 6-ի Կառավարության նիստի ժամանակ ՀՀ վարչապետի հնչեցրած խոսքի հետ՝ Հանձնաժողովը կարող է արձանագրել, որ խոսքը գնում է երկու տարբեր ոլորտների առարկաների մասին (պետական գույքի աճուրդով վաճառքի և կենսաթոշակի անկանխիկ վճարման), որոնց կարգավորման ոլորտն ինքնին տարբեր է և դրանց իրավական կարգավորումը ևս տարբեր է, իսկ այդ երկու առարկաների միակ միավորող հանգամանք է հանդիսացել գումարի՝ բացառապես անկանխիկ շրջանառվելու պահանջը: Ընդ որում ՀՀ վարչապետն իր խոսքի մեջ անդրադառնում է կենսաթոշակի հարցին որպես օրինակ՝ քննարկվող թեմայի լույսի ներքո: Ուստի Հանձնաժողովը հանգում է այն մտքին, որ Ընկերության տվյալ մեկնաբանությունը հիմնավոր չէ և չի բացառում խախտման հատկանիշները:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է անդրադառնալ երկու կարևոր հանգամանքների.

1. վերոշարադրյալ վերլուծության ընթացքում Հանձնաժողովը հաշվի է առել Ընկերության Պատասխանում բազմիցս հնչեցրած պնդումն առ այն, որ հաղորդավարի կողմից հնչեցրած Արտահայտությունները պետք է գնահատել ամբողջության մեջ;

2. Ծանուցմամբ, բացի հարուցված վարչական վարույթի հիմքերի և փաստական հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունից, նաև ներկայացվել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը (...*ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում՝ սեղմ ժամկետում միևնույն հաղորդման, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ այդ մասին իրազեկումը*) և դրա չկատարման հետևանքները (...*առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով*): Սակայն, ունենալով Օրենքով սահմանված վերոնշյալ պարտականությունները, Ընկերությունը չի իրականացրել ոչ ներկայացված տեղեկություններում առկա սխալների վերաբերյալ իրազեկում, ոչ էլ հաղորդման ընթացքում կամ դրանից հետո հայտնել է, որ հաղորդման ընթացքում ներկայացված փաստերում առկա է եղել սխալ տեղեկատվություն:

Հավելենք, որ հավաստի տեղեկատվության ապահովումը՝ որպես «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի հիմնարար պահանջ, բխում է և միաժամանակ ծառայում է Օրենքի հիմնական նպատակների իրականացմանը (1-ին հոդված 1-ին մաս՝ *Սույն օրենքի նպատակն է՝ ապահովել հավաստի տեղեկատվություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը*): Այն ամրապնդում է տեսալսողական մեդիայի պատասխանատվության հիմնարար սկզբունքը, համաձայն որի՝ հասարակության կողմից վստահության արժանանալու դիմաց, վերջիններս պարտավոր են գործել հաշվետու եղանակով՝ պատասխանատվություն կրելով տարածած բովանդակության որակի և ճշգրտության համար: Եվ սպառողը (դիտողը/ունկնդիրը) օրենքով երաշխավորված իրավունք ունի ստանալու ճշմարիտ, ամբողջական և չմոլորեցնող տեղեկություն:

Հեռարձակված ոչ հավաստի կամ սխալ տեղեկատվությունը կարող է վերածվել էական հասարակական վտանգի, որն առաջացնում է բազմաբնույթ ռիսկեր և վնասներ: Այսպես, օրինակ, անձինք կարող են մոլորվել և սխալ որոշումներ կայացնել մասնավորապես գույքի կամ այլ ակտիվների իրացման կամ այլ կենսական նշանակություն ունեցող բնագավառներում, ինչն էլ կարող է ուղղակիորեն ազդել նրանց սեփականության կամ այլ նյութական իրավունքների վրա:

Ուստի, Օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված սխալի իրազեկումը հանդիսանում է հանրային տեղեկատվական միջավայրի վստահելիությունն ու անվտանգությունը պահպանող կարևոր մեխանիզմ: Սխալի ուղղումը ոչ միայն օրենքով սահմանված պարտադիր պահանջ է, այլ նաև անհրաժեշտ և արդյունավետ միջոց՝ ուղղված հասարակական վնասի կանխարգելմանը, անհատների իրավունքների պաշտպանությանն ու հանրային շահին սպառնացող ռիսկերի նվազեցմանը:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները, վերոնշյալ փաստական հանգամանքները և դրանց համադրության վերլուծությունը՝ արձանագրում ենք, որ «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊ ընկերությունը չի ապահովել Օրենքով սահմանված՝ իր համար պարտադիր հանդիսացող պահանջը, այն է՝ ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում՝ սեղմ ժամկետում միևնույն հաղորդման, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ այդ մասին իրազեկումը :

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ Սույն օրենքի 7-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 14-րդ կետերով, 42-րդ հոդվածի 1-ին, մասերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Օրենքի 57-րդ հոդվածի 18-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 18-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

Գ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 19
ք.Երևան